

ԾԱՂԻԿ ՀԻՄՆԱԹՐ ԵՐԿՈՒ ԱՆ-
գամ կը հրատարակուի Զորեք-
շաբթի եւ Շաբաթ օրերն : —
տարեկան բաժանորդագրութեան
գինն է 400 դրուշ արծաթ : —
վեցամսեայն 50 . — Գաւառաց
համար 115 դրուշ . — վեցամ
սեայ 60 . — Ծանուցման տողը
5 դրուշ :

ԻՄՔԱԳԻՐ
Մ. ԳԱՓԱՄԱՃԵԱՆ



Որ եւ է նամակ կամ գրութիւն
պետք է ուղղել :

Առ Արտօնատեր և Տնօրէն
ԱՆՏՕՆ ՍԱՔԱՅԵԱՆ
Իսկի Զապիկէ Խատտէի
Նշան էք. Պէրպիւրեանի Տպա-
րանն :

Խմբագրութեան յանձնուած
գրութիւնք ետ չեն արուիր :

ԱՐՏՕՆԱՏԷՐ
ԱՆՏՕՆ ՍԱՔԱՅԵԱՆ

40 ՓԱՐԱ

Հ Ա Ն Դ Է Ս

ՓԱՐԱ 40

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն ԵՒ Բ Ա Ղ Ա Բ Ա Կ Ա Ն

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ազգային Տեսութիւն (Նկատողութիւն-
ներ) — Յարգանք առ Ազգային Բարեբարս. —
Մահադոյժ . — Մրցանակաբաշխութիւն . —
Մեղուաբուծութիւն . — Ծայրայեղութիւն . —
Շուքարի կիւր . — Մա՞նչ թէ աղջիկ . —
Հարց պատասխանի . — Վիպասանութիւն
Անիծեալ աղջիկը . — Ծանուց-մունք .

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն
Տ Ե Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Նախորդ Ազգային Տեսութեամբ
ըսինք ի՞նչ որ պէտք էր բարձր պահե-
լու համար ազգային արժանապատը-
ութիւնը, որ ամեն բանէ վեր է և
հարկ է միշտ վեր բռնել :

Բայց կայ պարագայ մը զոր կու-
զենք պարզել, այն է թէ ի՞նչ էին և
ի՞նչ կը նշանակեն այն համակրական
ցոյցեր, որ արտայայտուեցան առ Հայր
Արիշան :

Հարկ է օր բացատրուի այս կէտ,
որ այնքան կարեւոր է, ինչպէս կա-
րեւոր էր որ բացատրէինք ինչ ինչ հե-
տեւութիւններ, և գոհ ենք որ բն-
դունուած է ճիշդ այնպէս, ինչպէս
որ է, առանց երբէք վերագրելու մեզ
յետադիմական գաղափար, որ բնաւ
գոյութիւն ունեցած չէ մեր գրչին

ներքեւ, և ունենալն հակառակ է մեր
նշանաբանին, մեր սկզբունքին :

Արտայայտուած համակրական ցոյ-
ցերու բուն նպատակն է և պէտք լի-
նի գոհունակութիւն վասն այն օրք-
նութեանցն, զորս անընդհատաբար ու-
նեցած է Հայր Արիշան շուրջ յիսուն
տարիէ Հետէ վասն Հայ ազգային մա-
տենագրութեան :

Ի հարկէ մեր նախորդ Ազգային
Տեսութիւն բնաւ չվերաբերիր իւր եր-
կառիրութեանց լոկ գրական մասին :

Արդ, մեր պատուական եկեղեցա-
կան Հայրեր նոյն համակրական ցոյցե-
րէ պարտին ազդուիլ հետեւելու հա-
մար այնպիսի տշխատութեանց, յորս
կենան օգտակար ծառայութիւնք տու-
նալըն :

Եւ այս բան խիստ յարմար է իւր-
եանց կոչմանն և նուիրական պարտա-
կանութեանցը, վասնզի եկեղեցակա-
նութիւնն կը նշանակէ ծառայութիւն
առ Ազգն և եկեղեցին, և թէ ան-
ցած է այն ժամանակն, յորում եկե-
ղեցւոյ մէջ աղօթելն միայն բաւական
համարուէր եկեղեցականի համար և
իւր սուրբ յարգուէր :

Այժմու պահանջներ խիստ տար-
բեր են :

Զայ պարտին գիտնալ մեր եկե-
ղեցական Հայրեր և պէտքէ որ վայ-
լին միշտ օգտակար ծառայութեամբք,
եթէ կուզեն յարգուիլ և վայելիլ ընդ-
հանուր համակրութիւն, ոյր պայմանք

չեն սակայն յափունս գեղնազուարճ
Վոսփորէ վայելել հանգիստ, բաւա-
կանանալով միայն յատենի Պօլսոյ մի որ
է եկեղեցւոյ երկու խօսք արտասա-
նելով և ընդհանրապէս հարսանեաց
և յուղարկաւորութեան նախագահե-
լով :

Մանաւանդ ամուրի եկեղեցակա-
նաց փայլելու ասպարէզն այս չէ եր-
բէք, իրմէ կը պահանջուի ուսուցա-
նել, առաջնորդել, ազդել, ներշնչել,
հրահանգել, պատրաստել և տքնիլ
վասն ժողովրդեանն, որ ինքն է եկե-
ղեցի, առ որ ծառայելու կոչուած է,
և այն յարգանքը զոր կը վայելեն Հարք
ոմանք իւրեանց լոկ ազգային — գրա-
կան գործոց համար է, և ոչ այլ ինչ
և մեր այս գիտողութիւն ի հարկէ
հակասութիւն մը չէ մեր նախորդ
յօդուածին :

Հակասութիւն կը համարուէր յայն-
ժամ, եթէ այն յօդուածի մէջ չխոս-
տովանէինք Արիշանի գրական տաղան-
դըն և արժանիք : Բննադատութիւ-
նը կատարեալ լինելու համար մարդ-
պարտի արդարակորով լինել :

Յայտ է ահա քննադատութեան
օգտակարութիւնը, որ մեր գրուածոց
նշանաբանն եղած է միշտ :

Այսպէս բացատրելով օրուան ինդ-
րոյն պարագաները և պարզելով ժա-
մանակիս ոգին, ուրիշ բան չենք ընեշ,
բայց եթէ կը յիշեցնենք պարտիքն
Հայ-եկեղեցականութեան, որ անշուշտ

յուզուելու չէ մեր դիտողութիւններէ, վասն զի իւր իսկ օգտին համար կը գրենք, փափաղելով որպէս զի արժանեօք և օգտակար ծառայութեամբք լինի ընդհանուր յարգանաց և համակրութեան արժանի և ոչ թէ ի գլուխ իւր վեղար միայն կրելով, որ արժանիք չենթադրեր:

Այդ վեղար կը կրէին նաեւ մեր երանաշնորհ նախնիք, բայց չէին փայլեր այդու և եթ, այլ կը փայլէին այնպիսի մեծագործ ծառայութեամբք, ոյց պանծալի յիշատակը կը տօնէ մեր Ազգային-եկեղեցին անշուշտ ազգային հպարտութեամբ և Պատմութիւնը կը փառաւորէ նոցա անմահ յիշատակն որպէս Ազգային Բարերարաց, վասնզի նոքա էին Հայր մեր Ազգային--դըպրութեան, Հայր եկեղեցւոյ, Հայր աղքատաց, Հայր հիւանդաց, և այլն, և այլն, և իբր այն՝ Ազգին երախտագիտութեան վրայ իրաւունք ստացած են:

Ուստի, Ազգն երբ կը տեսնէ եկեղեցականներ քիչ շատ մեր երանաշնորհ նախնեաց հոգւով լցեալ, արժանեօք և օգտակար ծառայութեամբք փայլեալ և իւր կոչման ու պաշտօնին գիտակից, չդադրիր երբէք իւր յարգանքն և համակրանքն արտայայտել որպէս կը յայտնէ առ Հայրիկ, Մուրատեան, Նարպէյ, Օրմանեան, Սըրուանձտեան, Իզմիրլեան, Պարոնեան, Ալեաթհեան, Ստեփանէ, Հիւնքեարպէյէնտեան, Արծրունի, Մկրեան, և այլն, որ ունեցած են քիչ շատ իւրեանց ծառայութիւն առ Ազգն, եկեղեցին և առ գրականութիւն:

Խնդիրը պարզ է, Հայ-եկեղեցականութեան պարտաճանաչութեանը վրայ է, և ժամանակ է որ Հայ-եկեղեցականութիւնն հասկնայ և ըմբռնէ թէ պիտի յարգուի յայնժամ և եթ, երբ փայլի արժանեօք, հմտութեամբ և օգտակար ծառայութեամբք:

Ահա այս է ժամանակիս ոգին, զոր չհասկցող և հակառակ շարժող եկեղեցականն պէտք չէ ի զուր ակնկալէ յարգանք և պատիւ, որ այլ եւս ձրի չեն տրուիր:

ՅԱՐԳԱՆՔ ԱՌ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵՐԱՐՈ

Այս սիւնակաց մէջ յաճախ գրած ենք այն յարգանքի մասին, զոր պէտք է աւելի անխուսափելի պարտք է յայտնել ազգովին առ Ազգային մեծանուն Բարերարս, որ պանծալի գործերով անմահ յիշատակներ կը թողուն:

Ինչպէս յարգելով յազգեր իրենց բարերարներու մեծագործութեանց սիրալի յիշատակն անմահացնելու համար ի պատիւ արձաններ կը կանգնեն ու կը փառաւորեն, բայց մենք եթէ չենք կարող նոցա օրինակին հետեւի, կրնանք սակայն տարին գէթ մի օր յատկացնել ի մեծ պատիւ նոցա անմահ յիշատակին կատարելով համայն եկեղեցեաց մէջ յատուկ Ս. Պատարագ և հոգեհանգիստ՝ յանուանէ յիշատակելով նոցա անունն ու գործեր և այսու փառաւորել նոցա պանծալի յիշատակն ի նշան անմուռաց երախտագիտութեան:

Ըստ մեզ, նպատակայարմար լինել կը թուի Ս. Թարգմանչաց տօնի օրը, և կամ ուրիշ օր մը, զոր կ'որոշէ Ազգային Ժողովը, ինչպէս կը հուշակէ Ազգ. վարչութեան տեղեկագրին համաձայն այն անձնաւորութիւններու անուններ, որ իրենց մեծագործութիւններով Ազգային Բարերար կոչուելու անժխտելի իրաւունք ունին:

Նաեւ, կ'որոշէ, եթէ մայրաքաղաքին մէջ տեղի ունենայ մահն այնպիսեաց, յուզարկաւորութիւնը կատարել ընդ բարձր նախագահութեամբ Ս. Պատրիարքի, որ ներկայ կը գլխունի, առանց մասնաւոր հրաւերի, իբր ներկայացուցիչ Ազգին, իսկ եթէ ի գաւառս տեղի ունենայ, Ս. Առաջնորդն և կամ ի բացակայութեան նորա՝ կը նախագահէ իւր Փոխանորդը:

Նաեւ, Պատրիարքարանը, նոյնպէս ըստ որոշման Ազգային Ժողովոյ ի պաշտօնէ կուտայ ցանկն Ազգային Բարերարաց ի հրատարակութիւն այն հեղինակաց, որ Ազգային-Պատմութեան դասագիրք կը պատրաստեն:

Առ այժմ այսպիսի միջոցներ միայն կը յիշենք ազգովին փառաւորելու համար Ազգային մեծանուն Բարերարաց քաղցր ու պանծալի յիշատակն ի պատիւ և այլոց ի խրախոյս, յուսալով թէ

մեր սոյն բանաւոր առաջարկ կ'ընդունուի Ազգային Ժողովէն:

Ազգային Բարերարաց հանգէպ ազգովին երախտապարտ գտնուելու պէտքին վրայ արդէն ստէպ գրած ենք Ծաղիկի և թէ ասկէ առաջ Լոյսի և Պատկեր-Հայ-կենացի մէջ, իսկ այս անգամ վերստին կը կրկնենք Աղա Մըկրտիչ Սանասարեանի տխուր մահուան առթիւ, որ իրաւամբ ազգային մեծ սուգի մը երեւոյթն ունի և կ'արժէ որ ունենայ:

Խիստ գոհ ենք որ Ամեն. Ս. Պատրիարք Հօր տնօրինութեամբ անցեալ կիւրակէ օր մայրաքաղաքիս համայն եկեղեցեաց մէջ յատուկ հոգեհանգիստ կատարեցաւ և Ամեն. Խրիմեան Սրբազան և Գեր. Սրուանձտեանց պատարագելով՝ դրուատեցին բարեյիշատակ հանգուցելոյն մեծագործութիւնը:

Կսպասենք որպէս զի Ազգային Ժողովը իւր յառաջիկայ նստին յտրնկայս յայտնելով իւր խորին ցաւակցութիւնը՝ հուշակէ նորա մեծագործութիւնը և այս առթիւ յանձնարարէ Ազգ. վարչութեան մեր առաջարկութեան ոգւով օրինաբար մը ներկայելու վերաբերմամբ Ազգային Բարերարաց յիշատակին:

ՄԱՅԱԳՈՅԺ

Անցեալ կիւրակէ օր Դատար-գիւղի Ս. Թագաւոր եկեղեցին խիստ յախուր յուզարկաւորութիւն մը կատարեցաւ:

Ազնուա, Օր Զապէլ Գ. Հարէնց—Գեաորդի Ունճեան վսեմ. Մաթուս և Արիկ էֆէնտիներու—չկրնալով ճողպարի իւր ենթակայ եղած հիւանդութեան և իւր ազնիւ Ծնողաց բոլոր հոգատարութիւնն և ճարտար բժշկաց ճգունքն ի դերեւ հանելով կնքեց իւր մահկանացուն ի քսանամեայ ծաղիկ հասակի. հասակ, ուր պարտէր փայլի վայելելու համար այն գեղածիծաղ յոյսեր. որ իրեն կ'սպասէին, այլ աւա՛ղ, որ տխուր մահն խամրեց ի փայլել զինք:

Օր Զապէլ Հարէնց իւր սրտի ու մտաց չքնաղ յատկութիւններով և բարձր կրթութեամբն հանդերձալ էր Հայ-իգական սեւի պարծանքներէ մին լինելու, մինչդեռ այսօր, նա

խախնամական անհասանելի տնօրինութեամբ մը կը հանգչի իւր ծաղիկ հասակին մէջ ի ծոց սեւ ու անյագ հողին :

Յուզարկաւորութիւնը կատարեցաւ վայելուչ շքով, ընդ նախագահութեամբ Գեր. Մելքիսեդեկ Սրբազանի և դամբանականը (սօսեցաւ Գեր. Սրբանձտեանց յուզեալ սրտի :

Ընդ այս մեծ կորուստ կը յայտնենք երկնից մխիթարութիւնը իւր վշտահար Մնողաց, իւր ազնիւ Մօրեղբարց՝ վսեմ Ունճեան Մաթուս և Արիկ Էֆէնտիններու և համայն պարագայիցը :

ՀԱՆԴԻՍ ՄՐՑԱՆԱԿԱՐԱՇԽՈՒԹԵԱՆ

Անցեալ կիւրակէ օր տեղի ունեցաւ Գում-գափուի Պէզճեան և Լուսաւորչեան վարժարանաց մրցանակաբաշխութեան հանդէսն ի պարտիզի Մայրեկեղեցւոյ, որ ճաշակաւոր կերպիւզարդարուած էր ջանիւք Պատ, Թաղ, խորհրդոյ և ի մասնաւորի Աճառեան Մեծ. Յակօբ Էֆէնտի, որ իւր հնութեան վերաբերեալ ճոխ վաճառատունէն փոխադրած էր անդ թանկագին գորգեր և կարասիներ ի պատիւ նոյն հանդիսին, որում կը նախագահէր Սէֆէրեան Գեր. Սիմէոն Ս. Արքեպիսկոպոս իւր շուրջն ունենալով Պատր. Փոխանորդ Ասլանեան Տ. Ներսէս և Արչարունի Գեր. Յովհաննէս վարդապետներն, Աւագապատիւ և բազմաշխատ Տ. Սուքիաս և Արժ. քահանայից դասն, Մէարիֆի բարձրագոյն պաշտօնեաներէ վսեմ Հասիպ Էֆէնտի, Պատ. Թաղ խորհուրդն և ի ներկայութեան երկսեռ բազմութեան :

Մասնաւոր յիշատակութեան արժանի է Ազնուա. Յարութիւն Էֆէնտի Մասիսեան որ իւր ծանօթ արհեստարարութեամբը հայթայթած էր մրցանակներէ մի մեծ մասն ի խրախոյս երկսեռ ուսանողաց, և տեղն է ըսել թէ Մասիսեան Էֆէնտի այն անձնաւորութիւններէ մին է, որ իւրեանց ազնիւ բնաւորութեամբ, ազգօգուտ ծառայութեամբ և ուղղամիտ պաշտօնավարութեամբ արժանի են յարգանաց :

Գոհացուցիչ էր տեսնել թէ այս հանդէս մինչև վերջը չխանդարեցաւ

և ոչ մի անհաճոյ միջադէպով .

Այս տարուան քննութիւնը կը վերաբերէր նախորդ և նախկին Թաղ, խորհրդոց, բայց նկատելով արդի նորընտիր Պատ. Թաղ. խորհրդոյ գովանի ջանքերն և մտադրած բարեկարգական խորհուրդները, կը սիրենք ընդհուպ տեսնել այդ երկսեռ վարժարաններն բարձրացեալ, իսկապէս բարեկարգեալ և ժամանակիս ոգւոյն և Գում-գափուի ընդարձակ և բազմահայ թաղի ճշմարիտ պիտոյից և պահանջման համաձայն ի վիճակի, որ իւր — Թաղ. խորհրդոյ — արժանի փառքերէ մին պիտի լինի անշուշտ և պատիւ բերէ իւր լուրջ հոգածութեանը :

ՄԵՂՈՒԱՐՈՒԹՈՒԹԻՒՆ

(Նախորդ թուէն)

Պարսօր ձուարկութեան պարագած միջոցին, գործաւորուհի մեղուք ալ անգործ չեն կենար. կանխատես և մոմադործ ըլլալով ուրիշ ժամանակէ աւելի կը գործեն. վասնզի քիչ ատենէն փեթակը լեցնող նոր սերունդին բնակարան պատրաստել, պարսօր սրնունդը հայթայթել պէտք է. մեղուաց դասակ մը յարեալ է պարսօր ծառայութեան, ամենուրեք կընկերանայ նմա, բոլոր պարսօր պէտքերը կը հոգայ և հազար հոգ ու խնամք կը աննի: Պարսօր նախամանութիւնք և առանձնաշնորհմունք կըսկսին իւր մարութեան հետ: Իւր զուգաւորութենէն առաջ, միւս մեղուք հետը կը վարուին իրր մի սոսկական բնակիչ փեթակին. բայց զուգաւորութենէն վերջը, պարսօրը կըլլայ փեթակին գլխաւոր ապաւէնն ու ինչքը. այս պատճառաւ ինչ ակնածութեամբ և ինչ խնամք կը նայուի Միշտ ընթացակիցը կըլլան, միշտ նորա ճանրուն վրայ կը շարունակեն ոմանք զանի կը զոզանկեն, ոմանք զանի կը լղեն. նմա մեղր առող տուողի. իւրաքանչիւր մեղու դիտէ թէ իրենց հասարակապետութեան յաջողութիւնը պարսօր արգասաւորութիւնէն կախումն ունի :

ԳՂՈՒՆ ԶՈՐՐՈՐԴ

Մեղուաց Բրնորներուն հասկնելու եւ վերստին անոց համար

Փեթակին տաքութիւնը, որ երբէք չիջնար 23աստիճանէն վար ինչ որ ալ ըլլայ արտաքին բարեխառնութիւնը և որ կելլէ մինչև 36 աստիճան, գլխաւորապէս կը պատճառէ հաւկթաց ճաթելը :

Բոլոր մեղուք, Բառանց սեռի զանազանութեան, հաւկթէն դուրս կելլեն ձուարկութենէն 13 օր վերջը: Թրթուրները ծնած ատեն, բջիջին մինչև հինգերորդ օրը իրենց սնունդը մի և նոյն է. այսինքն գործաւորուհի մեղուին ստամոքսին մէջ պատրաստեալ, թեթեւապէս թթու, սպիտակագոյն բանդակէ կամ զանգուածէ մը կը բաղկանայ, արու և չէզոք մեղուք մի և նոյն քանակութեամբ սնունդ կընդունին, բայց պարսմայր ըլլալիք թրթուք աւելի մեծ առատութեամբ կընդունին: Գործաւորուհի մեղու ըլլալիք թրթուրներուն սնունդը եօթերորդ օրէն վերջը կը փոխուի. այսինքն սոյն երկու տեսակ մեղուաց թրթուրներուն բեղմնաւորիչ փոշոյ և մեղրի խառնուրդ մը միայն կը տրուի մինչդեռ նախնական բանդակը կամ զանգուածը պարսմայր ըլլալիք թրթուրներուն տալ կը շարունակուի յոյն մասնաւոր սնունդը, ինչպէս նաեւ բջիջներուն տարածութիւնը թուի թէ էգերուն ծննդաբերական կարողութեանց ծագումն է :

Ահա այսպէս է սննդեան ազդեցութիւնը որ իւր զօրութեամբ իրենց պարսմայրը կորսնցնող մեղուք կրնան նմա յաջորդ մը կարգել, ըստ կամաց, ընտրելով դեռ ոչ մեղր և ոչ բեղմնաւորիչ փոշի ուտող գործաւորուհի մեղուի մը թրթուրը. զսա ճշմարիտ էգի մը փոխելու համար, նորա որրանը մեծցնել և վերոյիշեալ մասնաւոր բանդակը կամ զանգուածով զանի սնուցանել բաւական է մեղուաց :

Իրենց կենաց առաջին փոփոխման մէջ թրթուրը իրենց զանգուածէ անկողնոյն վրայ բոլորուելով պառկած կը մնան: հազիւ թեթեւապէս կը շարժին և իրենց պէտքը նոյն ինքն իրենք տեսնելու անկարող կըլլան. գործա-

ւորուհի մեղուք նոցա կօգնեն և մեծ խնամք կը տանին, ձուարկութենէ վերջը իւր ձագին՝ ալ հոգ չը տանող պարսօր տեղ գործաւորուհի մեղուք օրը մէկ քանի անգամ թրթուրները աչքէ կանցնեն, նոցա պաշարը անդադար կը նորոգեն. և բջիջներուն յատակէն բանգակը կը հանեն կը մաքրեն. այսինքն թրթրաց բուժման բոլոր հոգն ու բեռը գործաւորուհի մեղուաց վրայ է:

Գործաւորուհի մեղուաց թրթուրը հակված են ելլելէն վեց օր վերջը իւր առաջին այլակերպութեան և փոփոխման կենթարկի. այսինքն տակաւ իւր բոլորակ դիւրը թողլով իւր բանտին մէջ կը շտկուի և խնայածեւ կերկարի Յծածուան մէջ, մետաքսեայ կեղեւ մը կը հիւսէ և իւր բջիջին մէջ մեղրամսէ խուփով մը կը շրջապատի որով մեղուք կը ծածկեն թրթուրին գլուխը. Յ օր վերջը թրթուրի կը փոխուի հարսնեակի (որդ փակեալ ի պարանոս): Սոյն երկրորդ վիճակին մէջ ոչ մի սնունդ չառնուր. իւր ճերմակ և կակուղ մարմնոյն վրայ քիչ ատենէն զարգանալիք արտաքին մասունք (այն է բողկուկը, լեզու և ոտք) կը տեսնուին. այս երկրորդ այլակերպութենէն 7 4/2 օր այն է ձուարկութենէն 21 օր վերջը, թրթուրը իւր կեղեւը

կը պատուէ. իւր բջիջին խուփը կը կըրծէ, և վերջապէս մեղուի այսինքն թեւաւոր միջատի ձեւով դուրս կ'ելլէ:

Գործաւորուհի մեղուաց նման, արու մեղուք մատաղ պարսօրք ալ սոյն երեք փոփոխութիւնը կը կրեն, բայց իրենց այլակերպութեան տեւողութիւնը սեռին համեմատ կը տարբերի:

Սրու մեղուք վեց օր կը մնան թրթուրի վիճակի մէջ. իրենց կեղեւը մէկ ու կէս օրուան մէջ կը հիւսեն. իրենց բջիջին մէջ գմբեթաձոր խուփով մը փակուած են. երեք օր վերջը հարսնեակի և ձուարկութենէն 24 օր վերջն կատարեալ միջատի այն է մեղուի կը փոխուին:

Մատաղ պարսօրք իրենց բջիջին մէջ հինգ օր թրթուրի ձեւով կը մնան գլխիկօր. երբ գործաւորուհի մեղուք նոցա համար մեղրամսով խուփ շինեն, մատաղ պարսօրք իրենց կեղեւը 24 ժամուան մէջ կաւարտեն, բայց սոյն կեղեւը սոցա միայն գլուխը, լանջքը և որովայնին առաջին օղակը կը պատէ և մարմնոյն մնացեալ մասը բայց կը մընայ, մինչդեռ արու և գործաւորուհի մեղուաց կեղեւը կամ պատեանք ամբողջ մարմինը կը ծածկէ. սոյն գործը լրանալէն վերջը պարսօրական թըր-

թուրք 10 և 11 երրորդ օրն և 12 երրորդ օրուան առաջին 6 ժամը կատարեալ հանդարտութեան մէջ անցնելէն վերջը հարսնեակի կը փոխուին և ամբողջ 4 օր նոյն վիճակին մէջ կը մնան և ձուարկութենէն 16 օր վերջը կատարեալ միջատի այն է մեղուի ձեւ կառնուն: Յարբունս հասեալ միջատին սոյն կերպարանքը միշտ նորա ազատութեան նշանը չէ: Եթէ պարսօրքը դեռ փեթակին մէջ գտնուի, գործաւորուհի մեղուք, մատաղ պարսօրքները չարձակելէ զատ, զանոնք իրենց բջիջներուն մէջ աւելի խստ րանտարգել կը պահեն, չորս աչքով պահպանութիւն կընեն, զանոնք ծածկող խուփը մեղրամսով շերտով մը կամրապնդեն, և սնունդ տալու համար միայն փոքրիկ ծակ մը կը թողուն. յարբուն հասեալ միջատը իրենց շարժմանց ազատութիւնը միայն պարսօր մեկնելովը կատանան:

(Գալ անգամ)

ԼԱՔԷՍ ՏԱՍԻՒՐԱՆՍ

ՊԵՐԻ ՎԷ ՊԱՀՐԻ ՀԱՐԻՔ ՎԷ ՔԱԶԱՅԱ ԳԱՐՇՈՒ ՍԻԿՈՒՐԹԱ ԳՈՒՄԲԱՆԵԱՍԸ

Թէէինաթ սքչէսի 5000000
Իհթիեաթ սքչէսի 300000

Ալթը սէնէի միթէճովուզ Տէրսասատէթտէ իճրայի մուամէլէ իտիլէլմէքտէ օլան մէզքիւր քումբանհանըն մու մէլաթը ճարկչինն տանա պի. իւսնի սուրէթլէ ճէրէյանը զըմընտա պու քէրրէ ումում մէմալիլի օմանիլէ աճ. նթալը քէօտէի աճիզանէմէ իհայէ ի իլտիկինտէն պատէմա էմլաք վէ էչեա վէ սայիրէ զայթ միթէտիլ ֆիլյաթ վէ հաթալը քթէտիլաթ շէրտիլլէ տալի մուամէլէ իճրալ վէ գազա վուգուլի աղապինտէ թաղմին իտէճէկի թասհիւտ իաէր վէ քումբանիսյը մէզքիւրըն սապըք աճ. նթալը թարաթը տան շիմտիլէ տէկին հէր նէ գատար բոլիցա վէրիլիլի իտէ իհայէթ 31 կիւնէ գատար լիէճիլլէ թաստիզ օլո նուր:

Իչպու քումբանհանըն թաչրա աճէնթալըընտ թալէպ պուլունտուղու թաղտիրտէ մէլքէզ իտարէլէ միլաճաթալարը թալիլիլէ օլո նուր:

Բ. ԵՆՆԻՐԼԵԱՆ

Մէրքէզ իտարէ Ստամպուլ Պահէ գարու Եօրիխատիս խան Նօմէրօ 1

Լ Ա Ք Է Ս

Տ Ա Ս Ի Ի Ր Ա Ն Ս

Ա Պ Ա Հ Ո Վ Ա Գ Ր Ո Ւ Թ Ե Ա Ն Ը Ն Կ Ե Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Ը Ն Դ Դ Է Մ Հ Ր Դ Է Հ Ի Ե Ի Ծ Ո Վ Ո Ւ

Հ Ի Մ Ն Ե Ա Լ Բ Ա Ր Ի Զ

Քարիթո կարանթի 50,000,000 Ֆր.

Ը Ն Դ Հ Ա Ն Ո Ւ Ր Գ Ո Ր Ծ Ա Կ Ա Լ Բ Ո Լ Ո Ր Թ Ո Ւ Ր Ք Ի Ո Ց

Բ. ԵՆՆԻՐԼԵԱՆ

Կ. Պօլիս Պաղչէ-քարու Եօրիխատիս խան Նօ. 1

ՄԱՅՐԱՅԵՂՈՒԹԻՒՆ

Սրբուհի խաթունը այնչափ մաքրա- սէր է, որ մինչեւ որ թահտափոշին արեւը սապօն ջրով չը լուայ, լաթ չը փռեր հոն:

* *

Ամբակում աղա որուն երկչոտու- թիւնը առակի տեղ անցած է, սիւլիւկ փակցունել տուած պահուն պէտպէ- ուին յատկապէս կը պատուիրէ որ իւր սիւլիւկը չմեռցուցած չդնէ:

* *

Նախանձօրք մը իւր կինը ճամբեց զի այս մարդը երազին մէջ տեսեր է որ իւր կինը դիմացի մտավաճառին հետ քասպ-հավասի կը խաղայ եղեր:

* *

Կատաղի ագահ մը՝ որ մը լրագրի մը մէջ կարգալով որ սեղանաւոր մը պօրսայի խաղերուն մէջ իր բոլոր հա- րստութիւնը՝ մէկու կէս միլիօն լիրա, մէկ ժամուան մէջ կորսնցուցեր է, խելքը թռուց:

ՅՈՒԱՐԵԱԼ ԿԻՆԸ

Պօլսոյ ամայի փողոցի մը մէջ, առաւօտ մը, ութսունն անցած կին մը հաստ գաւազանի մը կրթնած ապուշ նայուածքով չորս կողմը կը դի- տէր ու կըսէր: Քա առ ի՛նչ ծուն էր գլխուս եկաւ, քա խայիպ եղայ, խա- յիպ, քա մարդ ալ չանցնիր կոր որ հարցունէի:

Պատառատուն չալվարով բոկոտն հրեայ մը կանցնէր:

Կինը.—Քա պազիրկեան, պազիր- կեան, քուզում պարզիրկեան, շէյէ նէ- րէտէն կիտիլիր, շէյէ . . . աման, մոռցայ, ցնորե՞ր եմ, ինչ եմ էղէր ես ալ:

Հրեայն.—Աղնատիմ, աղնատիմ շէ- յէ . . . (ձեռքովը ամպերը ցուցու- նելով):

Կինը.—Էվէթ, պազիրկեան, շէյէ... Հրեայն.—Այաքլարին իւան եիտէ- յօրսուն:

Կինը.—Էվէթ, իշտէ եավաշ եավաշ կիտէյօրուտում տէ . . .

Հրեայն.—Ամա, չօք եէճ քալմիշին:

Կինը.—Եօք.—Թամամ վագթը տըր: Հրեայն.—Էօյլէ իսէ ուզուրլար օլ- սուն:

(Հրեայն կը քալէ):

Կինը.—Վույ երկու աչքդ չի քեօր- նայ, ինծի տինկեանը կառնէ կոր ե- դեր տէ ես խապար չունիմ:

Նոյն միջոցին էֆէնտի մը կանցնէր պատկառելի գէմքով:

Կինը. (որ երթալիք տեղը յիշած էր) էֆէնտի, էֆէնտի, քուզում էֆէն- պզտիկ Արմաշ նէ՛րէտէն կիտիլիր:

Էֆէնտի.—Արմաշ՝ մը, գատըն, սէն եանրլեօրսուն:

Կինը.—Եօք էֆէնտիմ, օրայա կի- տիյօրուտում տէ, եօլու շաչըտըմ:

Էֆէնտի.—Էյի ամա, սէնին տէտի- յին եէր էբէյիճէ ուզաք պիր մահայ տըր, սէն պունտան վաբօրա պինմէ- լիսին իզմիտէ կիթմէլիսին տէ օնտան սօնրա Արմաշ արամայըսըն՝ պու սէնին իշին տէյիլ գատըն:

Կինը.—Եօք, էֆէնտիմ, օ տէտիլին պէօյիւք Արմաշ տըր, պէն պզտ . . . քիւչիւք Արմաշ սօրայօրում:

Էֆէնտի.—Քիւչիւք Արմաշ՝ տա մը վար:

Կինը.—Հէ եա, վար տըր նէ: Մե- ղայ:

Էֆէնտի.—Նէրէ՛տէ պու:

Կինը.—Իշտէ Ստամպօլտա. զօրքին մեռնիմ:

Էֆէնտի.—Աճա՛յիպ, քիւչիւք Ար- մաշը պիլմէյօրուտում:

Կինը.—Հէ եա, մեղայ, վար տըր նէ:

—Էէֆէնտի.—Պաչգա վագթը կիթ- տիղին վա՛ր մը օրայա:

Կինը.—Հա՛պա, արեւո՛ւն մեռնիմ, քաչ եիւզ տէֆա:

Էֆէնտի.—Բէք ալէա, չօք կիթմի- շիմ տիյօրսուն հանկը մահալտէ պու- լունույօր պու քիւչիւք Արմաշ:

Կինը.—Իշթէ օնուն իսմինի ունութ- տում:

Էֆէնտի.—Էյ, պէն նա՛սըլ աղնա- յապիլիրիմ շիմտի:

Օէն նէ՛րէտէն կէլիյօրսուն պազա- երմ:

Կինը.—Էվտէն:

Էֆէնտի.—Պիլիյօրում, լաքին էվի՞ն նէրտէ տիր:

Կինը.—Էտիրնէ տուուտա օթուրը- ըըք:

Էֆէնտի.—Էտիրնէ քաբուսո՛ւմը տիմէք իսթէյօրսըն:

Կինը.—Էվէթ էֆէնտի:

Էֆէնտի.—Բէք ալէա, էվինտէն օ- ըրայա գատար նէ՛ գատար վագթիթտէ կիտէր իտին:

Կինը.—Կէնճ իտիմ իսէ պիր չէրեք- տէ կիտէր իտիմ գօճամըն սաղլըղըն- տա, ա՛շկըն ելլայ, առապալար ըլան տա կիտէր իտիք:

Էֆէնտի.—Բէք էյի շիմտի շու հա- լինտէ նէ՛ գատար վագթիթտա կիտէ- պիլիյօրսուն:

Կինը.—Եավաշ եավաշ իշթէ պիր սահալթտա կիտէրիմ:

Էֆէնտի.—(Չօք եագըն օլմալը): Էյ քիւչիւք Արմաշ մը տէյօրսըն նէ՛ տի- յօրսուն, նէ՛ եաբարսըն օրատա:

Կինը.—Ուխտա կիտէրիք, քիլիսէ վար:

Էֆէնտի.—Չիյարէթէ կիտէրսին էօյլէ՞ մի:

Կինը.—Էվէթ, չարխափան տըր, զօ՛րքին մեռնիմ:

—Էֆէնտի.—Ո՛ւն քաբանընա մը կիթմէք իսթէյօր աճապա:

Կինը.—Եօք, Ունքաբանը տէյիլ, թօնում օրատա իշէր, աման տիլիմին ուճունաա տըր տա սէօյլէյէմէյօրում:

Էֆէնտի.—Քայրքլա կիտիլմէ՞զ մի, եալընըզ գարա . . . :

—Կինը.—Հա՛, հա՛, հա՛. քարակէօմ- ըիւք քարակէօմըիւք, վույ Ալլահ կէնճիլինի սաքլասըն:

Էֆէնտի.—Էօյլէ իսէ շու քարչըքի տուվարըն տիպինտէն տօզրու կիթ, իշթէ օրայա վարըրսըն:

Կինը.—Շնօր հակալըմ արթըք պէն չըքարըրմ:

ԳՆՈՒՆԻ

ՄԱՆՉ-ԱՂՋԻԿ

Աղջիկ.—Մայրիկ մայրիկ, տօքթօռը եկաւ:

Մայրը.—(Դիմաւորելով) Պույուրու- նուզ, տօքթօր. բմիչկը որ նոր եկած գաղղիացի մ՛է աղջկան համար կան- չուած է:

Տոբ.—Նէ վար սէնին պագալում :
Մայրը.—Եկուր էօժէն, պիտի նա-
յի քեզ :

Տոբ.—(Աղջիկը դիտելով) . չօգ կիւ-
զէլ չօճօւ քի ալաճագալար իտի բիզ
կիպի :

Մայրը.—էյ տահա պէշ ալթը եա-
շընտա անճաք վար տըր . էվէնէճէք
վագթը տէյիլ քի ալընլար :

Տոբթ.—Նօ՛, մատամ վու նը քոմբ-
ռընէ բա , պէն ազ թիւրք սէօյէր ,
պէն տէմէտի էվէնէճէք , պէն տէտի ...
քօմանը տիթօն , էկէր սիզ չաղըրմա-
տի էօժէն , պէն քիզ իշին ալըյօ-
րում :

Մայրը.—Բը՞զ ալըյօրսուն : Գա՛ ինչ
կըսէ այս մարդը : Մերիննայ ուրկէ՞
դտաւ դրկեց ասիկայ :

Տոբ.—էվէթ մատամ , ժիւթըման ,
քիզ պիլիօրում :

Մայրը.— էյ քըզ տըր նէ , մեզայ ,
քըզ իշին ալըթօրըմ կըսէ կոր նէ , աղ-
ջիկ կը դիտնամ կոր ըսել կուղէ եղեր-
քըզ տըր , քըզ , օղլան տէյիլ , տօքթօու
վայ մեզքիս :

Տօբ.—Պահ , պահ , պահ հէմ օղլան
վար , հէմ քիզ :

Մայրը.—Տօբ , եօբ , օղլան եօբ ,
քըզ վար :

Տօբ.—Հէմ էօժէն , հէմ քիզ օլմազ
օլմազ : Նէ զաման էօժէն , օ զաման
սաքալ վար , պուլուք վար . Սիզ եաղ-
նիշ եափտի :

Մայրը.—Գա աս ինչ բաներ կըսէ
կոր , աճապ ետդնը եկած մարդէ՛ տա :

Տօբ.—էվէթ սիզ եաղնիշ եափտի :

Աղջիկը.—Մայրիկ , մայրիկ ես հոս-
էցայ , օր մը դպրօցը , աղջիկները ինծի
էօժէն կը կանչէին կոր նէ , միւսին
ըսաւ քի էօժէն մ՛ըսէք , էրիկ մարդու
անուն է , եւ դինեա ըսէք , եա չէնէ
էօժէնի ըսէք ըսաւ :

Տօբ.—Բառֆէթման , չօճուք աղնա-
տի պէն նէ աէտի (աղջկան) մատմա-
զէլ նէ տիր սէնին ատի :

Աղջիկը.—էօժէնի :

Տօբ.—Ալապօնէօու , մէնթնսօն թու-
վա անօռուր :

Բժիշկը դեղագիրը գրեց և աղ-
ջկան առաջընթացը և անունը միան-
գամայն շտկելով մեկնեցաւ :

Գ.

Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ն Օ Ս Մ Ա Ն Ե Ա Ն Պ Ե Տ Ո Ւ Թ Ե Ա Ն

ԱՇԽԱՏԱՄԻՆՅԱՑ

ՄԻՔԱՅԵԼ ԷԾ . ԱՇՃԱՆՆ

Հ Ա Տ Ո Ր Բ .

ՏՊԱԳՐ . ՆՇԱՆ 4 . ՊԵՐՊԵՐԵԱՆ

Գին 5 դահեկան :

Երկու հատորն ի միասին 8 դահե-
կան :

Կեդրոնատեղին է հանդիսիս տպա-
րանն , Կ . Պօլիս էսիի Զապթիէ ճատ-
տէսի , թիւ 61 :

ՀԱՐՑ ՊԱՏԱՍԽԱՆԻ

Ինչ է դրամօժիար :

—Անցագիր ամուսնութեան , ուր-
կէ կը զրկուի զայն ի ձեռին չունե-
ցողը :

* *

Ինչ է ամուսնութիւնը :

—Գոց գիրք մը , զոր կարգալ ա-
մեն օք կը վափագի , բայց դրամօ-
ժիտով ամուսնացողը շատ շուտ կը
պղջայ :

* *

Ինչ է ամուրիութիւնը :

—Կեանքի պակասը , զոր կը լե-
ցնէ մարդ ամուսնութեամբ :

* *

Ինչ է փառքը :

—Ստուեր , որուն ետեւէն կը վա-
զէ մարդ հասնելու համար , բայց
չվազողը կը հասնի ընդհանրապէս :

* *

Ինչ է առաքինութիւնը :

—Անուն մը :

* *

Ինչ է խղճի խայթը :

—Աւելորդ բեռ մը , կըսէ այն ,
որոյ սրտին մէջ դադրած են ազնիւ
զգացմունք :

Ի Լ Ա Ն Ա Թ

ՓԵՍՃԻ ԲԵԹԻ ՏՈՒՊԱԶԵԱՆ

Պէյօղլունտա ճատտէի քէպիրտէ Գալա-
թա սերայը գորշըժնտա 260 նիւմէրօլու
տիւքքեանընը թէրքիէ , պու քերրէ . Պէյօղ-
լու Պարզ բազարընտա Ա յնալը չարըը (բա-
սաժ տ'էօրօթ) տէրունինտէ 15 ն'ւմէրօլու
տիւքքեանա նազլ իթմիշ օլտուղունու
բազպէթլու միւշթէրիլէրինէ իլան իաէր :

Գալաթտա կէօմրի ք սօքաղընտան
Պրուսալը Յակօր վէ նիկօղոս աղալարը ,
քիւչատ իթտիլէրի 20 ն'ւմէրօլու լօքան-
թատա զայնի է վէն Փիլյաթ իլէ ալէա վէ
նէֆիս թատալ պուլունըր :

Օրսան կեանք

ՍԻՐԱՅԻՆ ԶԲՕՍԱՆԹ

Թատերախաղ 4 արարուած

Փափաղեան Տիրան էֆէնտիի յօրինած
տեղական կեանքի պատկերն եղող սոյն
զուսրճալի և բարոյալից թատերախաղը որ
միջին դասու ընտանեկան «սուարէներուն»
տխուր արդիւնքը կ' : ներկայացնէ ամէն
կարգի անձանց ընթերցանութեանն ար-
ժանի է :

Գինն է 3 դահեկան :

Մէջ վաճառարան և բորժարան լաճայի և այ
նիւնոց : Ալաճա համաժ թիւ 16 Թրշ է
Բեթէնէլէր

ՏԵՐ ԵՒ ՏՆՕԵՆ

Յ . Թ . ՉԱՄՄԻՇԵԱՆ

Պատիւ ունի ծանուցանել արգոյ
հասարակութեան թէ իւր վաճառա-
տան մէջ կը շինուին և կը նորոգուին
կոտրած , վնասուած , աւրուած երո-
պական ամէն տեսակ գործիք . ինչ-
պէս կազի կամ իւղի լամպաներ . աշ-
տանակներ , անկողնարանք . շիրինկա-
ներ . տուշեր սամալարներ և յախ-
ճապակեայ կոտրած որ և է նիւթեր .
ըստ ամենայնի , մաքուր վայելուչ և նո-
րէն աւելի հաստատուն :


Նաեւ , սոյն վաճառատան մէջ կը
գանուին , եւրոպական ընտիր լամպա-
ղեր , աշտանակներ ընտիր տպակի խո-
ղովակներ որոց համար հասարակու-
թիւնը միշտ կը գանգատի թէ չկան

ըստ կրօնների և ամէն տեսակ պատարաւորների, մէկ խօսքով, յանպայտի վերաբերեալ ամեն բան ինչպէս նաեւ պանեօ և չինկոյէ լուսացարաններ և տուչ ընելու համար պէտք եղած ամէն կերպ գործիք :

Գինեքը յոյժ չափաւոր են. զի մեր գործարանի սկզբունքն է ՃՇԳՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՒԱՏԱՐՄՈՒԹԻՒՆ :

*** — Փորձով գիտեմք և բնաւ տարակոյս չունիմք թէ յիշեալ ճարտարարուեստ ազգայնայն գործերէն մեծապէս գոհ պիտի ըլլան մեր ազգայինք և այլ եւս իւրեանց, այս կարգի պէտքերն հոգայու համար սիրայօժար պիտի գիմեն նոյն վաճառատուն և գործարանը, փոխանակ այլ տեղեր յաճախելու, մինչ սա վստահութեան ամէն պայման կ'ընծայէ իւր յաճախորդաց :

Օն ուրեմն, դիմեցէք անդ և փորձեցէք :



ՄԱՅԻՐ ԳՈՒՄԲԱՆԵԱՍԸՆԸՆ ՐՈՒՊԱ ՄԱՂԱԶԱԼԱԸԸ

ՊԵՅՈՂԱՌԻ ԹՈՒՆԵԼ ԳԱՐՇԸՍԸ
ՍՏԱՄՊՈԼ ՔԵՕՓՐԻԻ ՊԱՇԸ

Պէտքիւք ատամլար, գարլար, տէլիգանլար, գըզլար վէ չօճուգլար իչիւն հազըր վէ ըամարլամա էնվայի բուպալար, ֆանէլլար, շէմսիյէլէր, էլտիվէնլէր վէ զայրիհիւմ վէ զայրիհիւմ :

Հէր օն պէշ կիւնտէ մէվսիմէ մախսուս մօտա մալլար վիւրուտ իտէճէք տիր :

Սաթըլան մալլէրին քեաֆֆէսի պիրինճի վէ տայանագլը վէ տիւզկիւն մալլար տըր :

Մայէր գոււմբանեսաընըն գաիտէսի տայմա և էՅԻ ՎԷ ԷՅ ՎԷՆ ՄԱԼ ԱՍԹՄԱԳ՝ տան իպարէթ պուլունմուշ օլտուղը պիր զիյարէթէ մաղպամըղը թէշրիֆ իտէն բաղպէթլու միւշտէրիլէր կէօրէճէքլէր տիր :

Շիւպէ
ԻՍՔԵՆՏԵՐԻԹԵՎ ԿԷ ԳԱՀԻՐԷ

Շիւպէ
ԻԶՄԻՐ ԿԷ ՍԷԼԱՆԻԿ

Հայտէյին պագալըմ՝ ՄԱՅԻՐԷ՛

գարտ մնալու համար, յուզիչ նեղութիւն մը կը չարչարէ զինք և արդէն սկսած է համբերութիւնը կորսնցնել : Մերթ ընդ մերթ փայտակ մը կը յուսաւորէ իւր ակնարկներն, շղային սարսուռ մը կունենայ և կը մատնէ այն սաստիկ բարկութիւնն զոր ջանացած է ծածկելու և գլխէն վեր կը չարժէ իւր կծկեալ արմուկներն :

—Ո՛հ, թշուառականներն, թշուառականներն, կը մրմնջէ սեղմեալ ատամներովս :

Յանկարծ քայլերու աղմուկ մը կը սարսուռացնէ զնա : Դրան կողմը կը յուռաջանայ և կը բանայ :

Բիէն Ռուվընա սենեկին մէջ մտաւ :

Ագարակապետը ակնարկ մը նետեց :

—Հրամանիդ համեմատ լրտեսի դերը կատարեցի, պատասխանեց ծերունի սպասուորը. մացառներուն մէջ պահուրտած, տեսայ երիտասարդին գալը :

—Աւելի ցած խօսէ՛, ըսաւ ագարակապետը խուլ ձայնիւ մը :

—Տեսայ անոր պատին մերձենալն, քար մը վերցնելն և նորէն իւր տեղը դնելն :

— Այնուհետև :

ճամբաներուն վրայ ուշադրութիւնդ պիտի դարձնես, մի և նոյն ժամանակի մէջ կողմերն պիտի տեսնես . . . իմ կայանս հո՛ս է, ես ներքնակողման վրայ պիտի հսկեմ. Բիէն, հասկցա՛ր :

—Այո՛ :

—Ո՛հ, երբէք չպիտի կորսնցնեմ համբերութիւնս. կուզեմ գիտնալ և պիտի դիտնամ . . . որ իրենց գործադրած ամէն վարպետութիւններուն տեղեակ պիտի լինիմ. այլ եւս չպիտի կարենան խաբել զիս : Ծշմարտութեան հետամուտ եմ, ահաւոր ճշմարտութեան . . . Որչափ ահուելի լինի, դարձեալ կուզեմ գիտնալ . . . :

Մինչ այսպէս կը խօսէր, հրավառ կայծեր կը ցատկէին իր աչերէն դուրս :

—Եթէ աղջիկս չէ յարգած իւր հօր պատիւն և անարգած իրեն եւս, յարեց կոկորդային ձայնիւ մը, ա՛հ, այն տտեն ես կաթիլ առ կաթիլ պիտի խմեմ ամօթոյ տիղմն . . . :

—Ժա՛ք, ժա՛ք, այնքան լրջօրէն երդում մի ընե՛ր, գոչեց Ռուվընա վշտացեալ :

—Այո՛, պիտի խմեմ ամօթս. թէ իմն և թէ իրենն . . . :

ՅՈՎԷԼ Կ. ԿԱՐԻ

Քեօթիւր վէ հախապ տէ՛ր:

Մէղքիւր տէրօ ծընարգլըտա քերէս-
թէճի սօգաղընտա տէնիզ սահլինտէ
18 նիւմէրօ իլէ միւրազդամ օլուպ:
պու տէ՛Քա մատէն սօպալար իլէ գու-
զինօլար իչիւն տիկէր քէօմիւրլէրտէն
տահա էհվէն վէ դաեէթ տաեանազր
գօզ քէօմիւրիւ կէթիւրիւմիչ տիր. վէ
ալա ճինստէն մանկալ քէօմիւրիւ. վէ
սօպա վէ չամաչըր իչին տախի մախ
սուս քէսիւմիչ ալէա օտուէն Ֆիրուխթ
իտիւմէքտէ տիր: Վէ քէզալիք նիչի-
վէ նիւանթալը վէ Ֆէրիքէօիւ էհալի
սինէ պիր սուհուլէթ օլմազ ի ին.
Քանկալթիտէ Պիւեիւքաէրէ ճատտէս/ն
տէ համամ գարչըրտա 48 նիւմէրօ
իլէ միւրազգամ պիր շիւպէ քիւչատ
իտիւմիչ օլտուղուրազպէթիւ էհալիեէ
իլան օլունուր:

Լ Է Ս Բ Է Ր Ա Ն Ս

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ. ԸՆԴԴԵՄ ՀՐԴԵՀԻ	
Արտօնեալ Դրամագլուխ ֆր.	10 000 000
Ստորագրեալ	1 000 000
Վճարեալ	864 000

Ընկերութիւնս կապահովագրէ ընդդէմ հրդեհի ամեն տեսակ կալուած-
ներ, կարասիք, մթերանոցներու և վաճառատանց մէջ գտնուած ապր. նը-
ներ՝ խիստ դիւրամառջի գներով և ամենաշահաւոր պայմաններով:
Ընկերութիւնս մեծագումար գործեր կաշինալ ապահովագրելու համար
միացած է Եւրոպեան չորս կարիւր ընկերութեանց հետ՝ որոց Դրամագլը-
լուխը՝ ը հասնի առաւելքան 16 000 000 Ֆրանքի:
Աւելի ընդարձակ տեղեկութեանց համ. ը դիմել ի գրասենկս Ընդհանուր
Գործակալութեան, ի Պօլիս, Պահճէ Գարու, ձէլալ պէյ խանի ճիշտ դէմ
թիւ 21-22:
Ընդհանուր Գործակալք բովանդակ Թուրքիոյ
ՍԱՀԱԿ ԳԱՏԻՅ ԵՒ ԸՆԿ.

— Կը խնդրեմ, ժա՛ք, մի խօսի՛ր այդպէս,
սարսափ կազդես ինձ:
— Ա՛հ, միշտ կը պաշտպանես զնա:
— Այո, որովհետեւ չեմ կրնար ընդունել
թէ աղջիկդ, ծանր յանցանք մը գործած քլ-
լայ. աւելի անխոհեմութեան զո՛հ եղած էնա:
— Ոճիր մ'ըսել կուզե՛ս: Պիտի իմանանք
թէ մեր երկուքէն ո՛րը իրաւունք ունի. Այ-
սուհետեւ վայրկեան մը հանգիստ, ժամ մը
քուն չը կա՛յ ժաք Մէլիէ համար: Երկու օրէ
ի վեր ինձ այնպէս կը թուի թէ՛ քոցավառ ա-
ծուխներու վրայէն կը քայլեմ. շատ անգամ-
ներ, անոր գնացած միջոցիս, քիչ մնաց որ մատ-
նէի ինքզինքս զգացած ծայրայեղ բարկութե-
նէս. ինքզինքս զսպեցի, այդ զօրութիւնը մի-
այն ունեցայ: Այո՛, սպասելու համբերութիւ-
նը պիտի ունենամ, . . . ա՛հ, Բիէ՛ն, երանի՛ թէ
իրաւունք ունենայիր աղջկանս, ինձ և երի-
տասարդին համար. . . Ո՛հ, անծանօթն . . .
պիտի տեսնենք:
Երթանց կ՛ծկում մը և վայրագ ակնարկ մը
յայտնեց իւր խորհուրդն:

Գ.
Ն Ա Մ Ա Կ Ն
Միջօրէի ժամն երկուքն է. արեգակը կը
փայլի անամպ երկնակամարի մը վրայ և կը
տարածէ իւր լոյսն ու ջերմութիւնը ձորակին
մէջ: Ձմրան աւուրց մէջ ենք: Գործաւորք,
ժամուան մը հանգստենէ վերջ, իրենց գործին
կը վերսկսին:
Ժաք Մէլիէ, գլուխը վայրահակ, իւր սե-
նեկին մէջ կը շրջի որոշ յուզմամբ մը, իւր բաց
պատուհանէն պիտի կարենար տեսնել մարգա-
գետինն մէջ ծանրաքայլ արօրներու լծեալ եղ-
ներն, արեգակին առջեւ մանգաղներուն փայ-
լիլն. հնձողաց աշխատութիւնները դեռ նոր
կտրուած խոտերուն մէջ և քիչ մը հեռու,
բլրակին կողերը ծածկուած դեռ նոր դեղնցած
հասկերով:
Բայց ո՛չ: ինչ որ սովորաբար իւր սրտին
երանութիւն կը պատճառէր, այսօր հակա-
ռակ աղդեցութիւնը կ'ընէր իւր վրայ: Իւր
դէմքին նման, խորհուրդներն եւս տխուր են,
Հակառակ սոյն որոշման զօր ըրած է միշտ հան-